ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 23.12.2016թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Գ.Գյոզալյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Խաչատրյան. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Ռ.Աբրահամյան ՀՀ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության պետ
Դ.Վեքիլյան ՀՀ Արագածոտնի մարզի դատախազ
Ռ.Կիրակոսյան ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ
Մ. Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

23.12.2016թ. **ժ. 12.00**

1. Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ Ա. Ավետիսյան/:

2. Համայնքների կողմից բյուջեների նախագծերի ընդունման մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ Ա. Ավետիսյան/:

3. Համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերի մշակման և հաստատման աշխատանքների մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ Ի. Բարսեղյան/:

4. Ընդհանուր տեղեկատվություն 2016 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում իրականացված աշխատանքների մասին: ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական խոսքը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

5. Հայտարարություններ

Դեկտեմբերի 23-ին Արագածոտնի մարզպետարանում կայացավ մարզխորհրդի տարեվերջյան նիստը: Մարզպետ Գաբրիել Գյոզալյանը ներկայացրեց օրակարգը:

Օրակարգային հարցերին համապատասխան, համայնքների բյուջեների կատարման, հողի հարկի և գույքահարկի, սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշերի մասին զեկույցով հանդես եկավ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Արմեն Ավետիսյանը: Նշվեց, որ ընդհանուր կտրվածքով, առ այսօր մարզում սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է ավելի քան 93 %, որը մինչև տարեվերջ կկազմի 100 %: Առավելագույն արդյունք՝ 102,1 % գրանցել են Ապարանի տարածաշրջանի համայնքները: Համայնքների ղեկավարներին առաջարկվեց մինչև 2016 թվականի դեկտեմբերի 26-ը ցուցանիշների կատարողականը հասցնել առավելագույնի և հարցը մշտապես պահել ուշադրության կենտրոնում:

Խոսվեց նաև համայնքների կողմից բյուջեների նախագծերի ընդունման ընթացքի մասին և նշվեց, որ հաջորդ տարվա դոտացիաների հատկացումը կախված կլինի սեփական եկամուտների հավաքագրման կատարողականից :

Օրակարգի հաջորդ հարցին անդրադարձավ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ Բարսեղյանը:Նա նշեց, որ 114 համայնքներից 65-ը ավարտել են 5-ամյա զարգացման ծրագրերի նպատակների, արդյունքների և գործողությունների պլանավորման փուլերը և գտնվում են ծրագրի իրականացման ֆինանսական գնահատման փուլում, 26 համայնքներում ծրագրի նախագիծը պատրաստ է և գտնվում է քննարկման փուլում: Ներդրումային ծրագրի օրինակելի ձևերը ուղարկվել են մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և մարզի ակտիվ ձեռնարկություններին: Համայնքի ղեկավարներին առաջարկվել է առաջնորդվել ներդրումային ծրագրի կազմման մեթոդական ցուցումներով և ձևանմուշով: Նա նշեց, որ համայնքապետերից ակնկալում ենք նոր ծրագրեր:

Օրակարգի հարցերից հետո ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Ա.Խաչատրյանը կրկին խոսեց սեփական եկամուտների հավաքագրման, ներդրումային ծրգրերի և 5-ամյա զարգացման ծրագրերի նպատակների կարևորության հարցերի մասին:

Քննարկված հարցերին ամփոփ անդրադարձ կատարեց մարզպետ Գաբրիել Գյոզալյանը: Նա նաև ընդհանուր տեղեկատվություն հաղորդեց 2016 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում իրականացված աշխատանքների մասին: Նա իր գոհունակությունը հայտնեց համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում ունեցած հաջող արդյունքի համար, ինչի շնորհիվ այսօր հանրապետության մարզերի մեջ Արագածոտնի մարզը առաջավոր տեղում է: Նա հորդորեց լրջագույնս մոտենալ այս խնդրին, քանզի երկրի ղեկավարության մոտեցումը այնպիսին է, որ համայնքներում իրականացվելիք ներդրումային ծրագրերի իրականացման գործում հաշվի է առնվելու սեփական եկամուտների արդյունանքները:

Մարզխորհրդի նիստն ավարտվեց Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական խոսքով:

Գ.ԳՅՈԶԱԼՅԱՆ